«ԳԱԶՊՐՈՄ ԱՐՄԵՆԻԱ» ՓԲԸ
ԱՐՄԱՎԻՐԻ ԳԳՄ
ԱՐՄԱՎԻՐԻ ՏՏ

ЗАО «ГАЗПРОМ АРМЕНИЯ»
АРМАВИРСКИЙ ФГГ
АРМАВИРСКИЙ ТУ

ք. Արմավիր Հանրապետության 13
г. Армавир, ул. Анрапетутян 13
E-mail: armavirfilial@gazpromarmenia.am

Հեռ. (0237) 2-22-42
Тел: (0237) 2-22-42

№ 565 «15» 06 2023թ./г.

«Վովա և Սամսոն» ՍՊԸ տնօրեն
Պարոն Արմեն Ստեփանյան

Հարգելի պարոն Ստեփանյան

«Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ և « Վովա և Սամսոն » ՍՊԸ միջև 02.09.2013թ. կնքված բնական գազի մատակարարման (Մատակարար-բաժանորդ (կազմակերպություն)) պայմանագրում նշված՝ « Վովա և Սամսոն » ՍՊԸ կողմից գ.Մրգաշատ 2փ.թիվ-2 հասցեում շահագործվող գազասպառման համակարգի հաշվառման հանգույցում տեղադրված RPT-3 տիպի տուրբինային գազի առնտրային հաշվառքի սարքի տեխնիկական բնութագրերը չեն բավարարում ՀՀ կառավարության 29 հունվարի 2016 թվականի «Սոցիալական և կենսական կարևոր նշանակություն ունեցող չափման միջոցները, դրանց ներկայացվող պահանջները և շուկայահանման կարգը սահմանելու մասին» N 60-Ն Որոշմամբ սահմանված չափման միջոցներին ներկայացվող պահանջներին: Մասնավորապես Որոշման III.գլխի 4. Կետում նշված է գազի հաշվիչներին ներկայացվող շահագործման պայմանները, որի Աղյուսակ 1-ում բերված է աշխատանքային ծախսի միջակայքի թույլատրելի շեմերը՝ 1.0 դասի դեպքում ≥20, իսկ 1.5 դասի դեպքում ≥150:

Աղյուսակ 1

Դաս	Q_{max}/Q_{min}	Q_{max}/Qt	Qr/Q_{max}
1.5	≥150	≥10	1.2
1.0	≥20	≥5	1.2

Իսկ առավելագույն թույլատրելի սխալանքին (այսուհետ ԱԹՍ) վերաբերվող պահանջում նշված է՝ չափման պայմաններում ծավալ կամ զանգված ցույց տվող գազի հաշվիչների համար ԱԹՍ-ն ներկայացված է Աղյուսակ 2-ում: Եթե Qt և Q_{max} –ի միջև ընկած բոլոր սխալանքներն ունեն նույն նշանը, դրանք չպետք է գերազանցեն 1%-ը՝ 1.5 դասի դեպքում, և 0.5 %-ը՝ 1.0 դասի դեպքում

Աղյուսակ 2

Դաս	1.5	1
$Q_{min} \le Q \le Q_t$	3%	2%
$Q_t \le Q \le Q_{max}$	1.5%	1%

Ուստի մատակարարվող բնական գազի քանակությունը գործող օրենսդրության պահանջներին համապատասխանող գազի առնտրային հաշվառքի սարքով հաշվառելու նպատակով, «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ն առաջարկում է 6 ամիս ժամկետում փոխարինել վերը նշված առնտրային հաշվառքի սարքը փաստացի սպառմանը համապատասխանող տիպաչափի նոր՝ ՀՀ Չափագիտության ազգային մարմնի կողմից տեսակը հաստատված և «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ համակարգում շահագործվող հաշվառքի սարքով (անդրաձայնային, ռոտացիոն) և նշված փոփոխությունը ամրագրել բնական գազի մատակարարման պայմանագրում:

Հարգանքով Արմավիր ՏՏ-ի պետ՝ Վ.Յուզբաշյան

Կատարող՝ Ա.Մանուկյան
098-54-68-86